**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի նախագծի *Կ-280-12.09.2019-ԱՍ-011/0* ***ՆԱԽՆԱԿԱՆ*** քննարկման համար ներկայացված բանավոր առաջարկների

| ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| ՆԱՐԵԿ ՁԵՅՆԱԼՅԱՆ | «ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի նախագծի *Կ-280-12.09.2019-ԱՍ-011/0* | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող ե1) կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.<br><br><<ե1) ռազմական դրության պայմաններում բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման ապահովում, բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններին ~~Հայաստանի Հանրապետության վրա գինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում~~ բնակչության բնական կենսագոյության ապահովման համար լրացուցիչ ուժերի եւ միջոցների ծավալման վերաբերյալ առաջադրանքների տրամադրում:>><br><br>Հիմնավորում: ե1) կետի շարադրանքը սկսում է <<ռազմական դրության պայմաններում>> բառերով, հետևաբար, Սահմանադրության 119 հոդվածը կրկին շարադրելու անհրաժեշտություն չկա: | Ընդունվեց | Ընդունվեց<br><br>(կողմ 9) |
| ՆԱՐԵԿ ՁԵՅՆԱԼՅԱՆ | «ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի նախագծի *Կ-280-12.09.2019-ԱՍ-011/0* | Նախագիծը 2-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ հոդվածով.<br><<Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ կետով.<br><<15) սահմանում է ռազմական դրությամբ պայմանավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների առողջապահության բնագավառի կառավարման լիազորությունները:>>:<br>Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածները համարակալել համապատասխանաբար 4-րդ և 5-րդ համարներով:<br>Հիմնավորում: Նախագծով որոշակիացված չէ այն հարցը, թե ինչ է ենթադրում «կառավարումը»: Նման լայն ձևակերպման իրավաբանական ուժ ստանալու դեպքում՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մասնավոր կազմակերպությունների սեփականության իրավունքի և, որպես դրա տրամաբանական զարգացում, տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացումը, ըստ էության, որոշակի ժամկետով փաստացի անցնելու է պետական մարմնին: Ելնելով դրանից, առաջարկումմ եմ ռազմական դրության ժամանակ կառավարության լիազորությունների թվում ավելացնել առողջապահական բնագավառի կառավարման լիազորությունների սահմանումը: | Ընդունվեց | Ընդունվեց<br><br>(կողմ 9) |